ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 9

27 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2024թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 18 անդամներ:

Բացակա էին՝ Արմեն Ավետիսյանը, Արտյոմ Գեվորգյանը, Վահագն Սարգսյանը

Համայնքի ղեկավարի իրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
Գրիգոր Հալլաբյան, Ստելլա Բաղայան

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Գագիկ Մաթևոսյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Արման Սմբատյանը

Լսեցին
ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ ՎԱՀԱԳՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՄԱՆ ՍՄԲԱՏՅԱՆ/

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով Նոր Հաճընի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի զեկուցագիրը՝ Նոր Հաճընի համայնքի ավագանին որոշում է.

1. Նոր Հաճընի համայնքի ավագանու մեկ հերթական նստաշրջանի ընթացքում նիստերից և քվեարկություններից բացակայության հիմքով՝ ավագանու անդամ Վահագն Սարգսյանի լիազորությունները համարել դադարեցված:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Կողմ-0 Դեմ-18 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 84-Ա/

Լսեցին
ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ ԳՈՌ ՄԵԾՈՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՄԱՆ ՍՄԲԱՏՅԱՆ/

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով Նոր Հաճընի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի զեկուցագիրը՝ Նոր Հաճընի համայնքի ավագանին որոշում է.

1. Նոր Հաճընի համայնքի ավագանու մեկ հերթական նստաշրջանի ընթացքում նիստերից և քվեարկությունների ավելի քան կեսից բացակայության հիմքով՝ ավագանու անդամ Գոռ Մեծոյանի լիազորությունները համարել դադարեցված:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Կողմ-0 Դեմ-18 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 85-Ա/

Լսեցին
ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ ՍԱՀԱԿ ԳՅՈՒԼԻՆՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՄԱՆ ՍՄԲԱՏՅԱՆ/

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով Նոր Հաճընի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի զեկուցագիրը՝ Նոր Հաճընի համայնքի ավագանին որոշում է.

1. Նոր Հաճընի համայնքի ավագանու մեկ հերթական նստաշրջանի ընթացքում նիստերից և քվեարկությունների ավելի քան կեսից բացակայության հիմքով՝ ավագանու անդամ Սահակ Գյուլինյանի լիազորությունները համարել դադարեցված:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Կողմ-0 Դեմ-18 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 87-Ա/

Լսեցին
ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի N 125-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՄԱՆ ՍՄԲԱՏՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34 -րդ հոդվածների պահանջներով, Նոր Հաճըն համայնքի ավագանին որոշում է.

1. Նոր Հաճըն համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 15-ի <<Նոր Հաճընի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների համար վճարվող հավելավճարի կիրառման կարգը և չափը սահմանելու մասին» N 125- Ա որոշման 2- րդ կետում կատարել փոփոխություն

<<Նոր Հաճընի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների՝ 5 և ավել տարիների համայնքային ծառայության ստաժիհամար սահմանել հավելավճար պաշտոնային դրույքաչափի 5 %-ի չափով>> բառերը փոխարինել <<Նոր Հաճընի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների երկար տարիների աշխատանքային ստաժի համար հավելավճարը համայնքային ծառայողի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ կիրառել տոկոսային ավելացմամբ 5-ից 10 տարի աշխատանքային ստաժի դեպքում 5%-ի չափով, 10-ից ավել տարիներին՝ 10%-ի չափով>> բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հոկտեմբերի 01-ից:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 88_Ա/

Լսեցին
ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԸ ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՑԱՆԿՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ԵՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ «ԿԱՆԱՉԱՊԱՏՄԱՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍՏԵԼԼԱ ԲԱԴԱԼՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, 77-րդ հոդվածի 3-րդ մասի, և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Նոր Հաճընի համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***

1. Նոր Հաճըն համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ցանկում ընդգրկել 65 000 000 (վաթսունհինգ միլիոն) դրամ հաշվեկշռային արժեքով կոյուղագծերի մաքրման մեքենան (KO-564, ամրաշրջանակ 65115-3971-48, գույքային համար՝ 30000314, նույնացման համար՝ X5H564005R0000320, տրանսպորտային միջոցի հաշվառման վկայագիր՝ N YJ959976):
2. Սույն որոշման 1-ին կետում նշված տրանսպորտային միջոցը անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել «Կանաչապատման և բարեկարգման» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 89-Ա/

Լսեցին
ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍՏԵԼԼԱ ԲԱԴԱԼՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Նոր Հաճըն համայնքի ավագանին ո ր ո շ ու մ է՝

1. Նոր Հաճըն համայնքապետարանի ձեռքբերած գույքը սեփականության իրավունքով օգտագործման տրամադրել համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին՝ համաձայն 1-2 հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման հաջորդող օրվանից:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 90-Ա/

Լսեցին
ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԵՎ ՇԱՐԺԱԿԱՆ ԳՈՒՅՔԵՐԸ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՄԱՆ ՍՄԲԱՏՅԱՆ/

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21- րդ կետի, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը Նոր Հաճըն համայնքի ավագանին որոշում է՝

1. Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքային սեփականություն համարվող անշարժ և շարժական գույքերը 2024 թվականի ընթացքում աճուրդ-վաճառքի միջոցով օտարել և հաստատել մեկնարկային գները՝ համաձայն 1-2 հավելվածների (հավելվածները կցվում են) :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդող օրը:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 91-Ա/

Լսեցին

<< ՁԵՐ ԼՌՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՍԵԼ ԳԻՏԻ >> ԽՈՐԱԳՐԻՐԸ ԿՐՈՂ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍՏԵԼԼԱ ԲԱԴԱԼՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով, և հիմք ընդունելով << Ազգային վերածնունդ >> հայրենասիրական հասարակական կազմակերպության անդամ Ռուզաննա Մխիթարյանի գրությունը, համայնքի ավագանին **որոշում է.**

1. Թույլատրել համայնքի ղեկավարին՝ իրականացնելու ծախսեր բյուջեի 08. 2. 4 <<Այլ մշակութային կազմակերպություններ>> հատվածի 4819 <<Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին>> հոդվածից և << Ազգային վերածնունդ >> հայրենասիրական հասարակական կազմակերպությանը հատկացնել 2 000 000 (երկու միլիոն) դրամ՝ <<Ձեր լռությունը խոսել գիտի >> խորագիրը կրող ծրագրի իրականացման համար, որպես ֆինանսական աջակցություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 92-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 134-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍՏԵԼԼԱ ԲԱԴԱԼՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի առաջին մասով, 34-րդ հոդվածի առաջին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով, համայնքի ավագանին որոշում է.

1.Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 134-Ն որոշմամբ (այսուհետ՝ որոշում) հաստատված NN 2, 3, 6 հավելվածներում կատարել փոփոխություն համաձայն հավելված 1-ի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 94-Ն/

Լսեցին

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ԿԱՄ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԱՏԿԱՆՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԾԱՆՐԱԲԵՌՆՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳՐԻԳՈՐ ՀԱԼԼԱԲՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Նոր Հաճըն համայնքի ավագանին ո ր ո շ ու մ է՝

1.Օտարել.

1) Քաղաքացիներին կամ իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող բնակելի, հասարակական, արտադրական և այլ նշանակության շինությունների, ինչպես նաև ավտոտնակների պահպանման ու սպասարկման համար առանձնացված այն հողամասերը, որոնց նկատմամբ գրանցված է քաղաքացիների կամ իրավաբանական անձանց վարձակալության կամ օգտագործման իրավունքը, բացառությամբ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի:

2) Հողային օրենսգրքի 118-րդ հոդվածի 4-րդ և 6-րդ կետերի հիմքով ձեռք բերված հողամասերը, բացառությամբ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի:

3) Քաղաքացիներին կամ իրավաբանական անձանց պատկանող գույքի նկատմամբ իրավունքների առաջին պետական գրանցման ժամանակ Հողային օրենսգրքի 64-րդ

հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով սահմանված, սեփականաշնորհված ընդհանուր հողաբաժնի չափից փաստացի ավել օգտագործվող հողամասերը, բացառությամբ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի:

2. Սույն որոշման 1-ին կետի 1-ին և 2-րդ ենթակետերով սահմանված այն հողամասերը, որոնք ներառված են Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված ցանկում, առանց մրցույթի, վարձակալության իրավունքով տրամադրել դրանց նկատմամբ օրենքի ուժով օգտագործման իրավունք ունեցող քաղաքացիներին կամ իրավաբանական անձանց՝ տվյալ հողամասի անշարժ գույքի հարկի դրույքաչափին հավասարեցված տարեկան վարձավճարով:

3. Սահմանել, որ սույն որոշմամբ նշված հողամասերն ուղղակի վաճառքի կարգով, գնման նախապատվության իրավունքով, դրանք տիրապետող անձանց օտարման կամ վարձակալության տրամադրման գործընթացներն իրականացնում է Նոր Հաճըն համայնքի ղեկավարը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ-11 Դեմ-1 Ձեռնպահ-6

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 95-Ա/

Լսեցին

ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27- Ի ԵՐԿՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՁԵԿ. ԱՐՄԱՆ ՍՄԲԱՏՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ և 16-րդ հոդվածների դրույթներով՝ Նոր Հաճըն համայնքի ավագանին՝ որոշում է.

Հաստատել համայնքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 27-ի երկրորդ նստաշրջանի հերթական թիվ 9 նիստի հետևյալ օրակարգը.

1. Նոր Հաճըն համայնքի ավագանու անդամ Վահագն Սարգսյանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին

2. Նոր Հաճըն համայնքի ավագանու անդամ Գոռ Մեծոյանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին

3. Նոր Հաճըն համայնքի ավագանու անդամ Արտյոմ Գևորգյանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին :

4.Նոր Հաճըն համայնքի ավագանու անդամ Սահակ Գյուլինյանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին:

5. Նոր Հաճըն համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 15-ի N125-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

6. Տրանսպորտային միջոցը Նոր Հաճըն համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ցանկում ընդգրկելու և անհատույց օգտագործման իրավունքով «Կանաչապատման և բարեկարգման» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը տրամադրելու մասին

7.Նոր Հաճըն համայնքին սեփականության իրավունքով պատկանող գույքն անհատույց օգտագործման իրավունքով համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին տրամադրելու մասին:

8. Նոր Հաճըն համայնքի համայնքային սեփականություն համարվող անշարժ և շարժական գույքերը աճուրդ-վաճառքի միջոցով օտարելու թույլտվություն տալու մասին

9. << Ձեր լռությունը խոսել գիտի >> խորագրիրը կրող նախաձեռնությանը ֆինանսական միջոցներ հատկացնելու մասին:

10. <<Գոռ Մեծոյան>> վոկալ ստուդիային ֆինանսական միջոցներ հատկացնելու մասին:

11. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 134-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

12. Քաղաքացիներին կամ իրավաբանական անձանց պատկանող շինություններով ծանրաբեռնված հողամասերն օտարելու կամ վարձակալության իրավունքով տրամադրելու մասին:

13. Նոր Հաճըն համայնքի ավագանու հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 83-Ա/

Լսեցին

ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ ԱՐՏՅՈՄ ԳՎՈՐԳՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՄԱՆ ՍՄԲԱՏՅԱՆ/

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով Նոր Հաճընի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի զեկուցագիրը՝ Նոր Հաճընի համայնքի ավագանին որոշում է.

1. Նոր Հաճըն համայնքի ավագանու մեկ հերթական նստաշրջանի ընթացքում նիստերից և քվեարկություններից բացակայության հիմքով՝ ավագանու անդամ Արտյոմ Գևորգյանի լիազորությունները համարել դադարեցված:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Կողմ-0 Դեմ-18 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 86-Ա/

Լսեցին
<<ԳՈՌ ՄԵԾՈՅԱՆ>> ՎՈԿԱԼ ՍՏՈՒԴԻԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍՏԵԼԼԱ ԲԱԴԱԼՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով, և հիմք ընդունելով << Գոռ Մեծոյան >> վոկալ ստուդիայի գեղարվեստական ղեկավար, ուսուցիչ Գոռ Մեծոյանի գրությունը, համայնքի ավագանին **որոշում է.**

1. Թույլատրել համայնքի ղեկավարին՝ իրականացնելու ծախսեր բյուջեի 08. 2. 4 <<Այլ մշակութային կազմակերպություններ>> հատվածի 4819 <<Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին>> հոդվածից և << Գոռ Մեծոյան >> վոկալ ստուդիային հատկացնել 1 500 000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) դրամ՝ Եգիպտոսի մայրաքաղաք Կահիրեում կայանալիք , Եգիպտոսի մշակույթի նախարարության կողմից կազմակերպված <<Աշխարհի երեխաները Եգիպտոսում>> միջազգային փառատոնին մասնակցության համար, որպես ֆինանսական աջակցություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 93-Ա/

Լսեցին
ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2- ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՄԱՆ ՍՄԲԱՏՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի, Նոր Հաճըն համայնքի ավագանին որոշում է

1. Նոր Հաճըն համայնքի ավագանու 2- րդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օր սահմանել 2024 թվական հոկտեմբերի 14 -ը՝16:00 ժամը :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 96-Ա/

Ավագանու անդամներ

ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՌՈՄԱՆ ԱՎԴԱԼՅԱՆ

ԽԱՉԱՏՈՒՐ ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

ԱՆԻ ԳԱԼՍՏՅԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՍԱՀԱԿ ԳՅՈՒԼԻՆՅԱՆ

ԱՐԿԱԴԻ ԹՈՐՈՍՅԱՆ

ԱՆԻ ԻՍՊԻՐՅԱՆ

ՍՈՖԻԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԱՐՏԻԿ ԽԱՌԱՏՅԱՆ

ԹՈՎՄԱՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԷՄՄԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԳՈՌ ՄԵԾՈՅԱՆ

ԳԵՂԱՄ ՄԽԻԹԱՐՅԱՆ

ԱՆՆԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ

ՆԵՐՍԵՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՆԱՐԻՆԵ ՕԶՆԵՑՅԱՆ

Համայնքի ղեկավար

ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Նիստն արձանագրեց՝ Արման Սմբատյանը